ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-2-1-Ա

ք. Երևան 18.03.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի մարտի 18-ի նիստում քննարկեց 2015 թվականի հունվարի 12-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Մեդպրոգրես» ՍՊԸ-ի (Երևան, Թբիլիսյան խճ. 35/2, բն. 10, ԱՄ) (այսուհետ՝ բողոքարկող) «Gesavit Гесавит Գեսավիտ» (հայտ №20140120) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 107-րդ կետի 14-րդ մասի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռեւս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս «Fiantis.se» ընկերության կողմից օգտագործվող «Gesavit» ապրանքային նշանի նկատմամբ, որը գովազդվում է http://www.gesavit.cz ինտերնետային կայքում, որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և

կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ բողոքարկողը իր բողոքում որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել, ինչը հիմք կհանդիսանար փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու համար: Հետևաբար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի դրույթների համաձայն ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Gesavit Гесавит Գեսավիտ» (հայտ №20140120) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ